ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 75-Ա

«05» ապրիլի 2022 թվականի գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱՍԻԱ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 1-ին ենթակետի և 50-րդ կետի դրույթներով

ո ր ո շ ու մ եմ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում տեղակայված համայնքային սեփականություն հանդիսացող, 08-010-0028-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի հասցեավորումը սահմանել հետևյալ կերպ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայր 2-րդ փողոց, 39/7 հողամաս:

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«05» ապրիլի 2022 թվական
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ N 76-Ա

«05» ապրիլի 2022 թվականի գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՄԱՍԻԱ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ՏԵՂԱԿԱՅՎԱԾ ԷԼԶԱ ՎԼԱԴԻՄԻՐԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԵՎ ՎԼԱԴԻՄԻՐ ՇԱՀԵՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՄԱՐԱԿԱԼՄԱՆ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետի 50-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Էլզա Վլադիմիրի Բարսեղյանի դիմումը

ո ր ո շ ու մ եմ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրում տեղակայված Էլզա Վլադիմիրի Բարսեղյանի և Վլադիմիր Շահենի Պետրոսյանի ընդհանուր սեփականություն հանդիսացող, 08-010-0045-0013 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի հասցեավորումը սահմանել հետևյալ կերպ՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայր 25-րդ փողոց, 16 հողամաս:

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«05» ապրիլի 2022 թվական
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 77-Ա

«05» ապրիլի 2022 թվական գյուղ Ամասիա

ԶՈՀՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՂ ՍԵՐՅՈԺԱ ՍԵՎԱԿԻ ԳԱԼՈՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ՝ ՍԵՎԱԿ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԳԱԼՈՅԱՆԻՆ, ՀԱՅԿՈՒՀԻ ՍԵՐՅՈԺԱՅԻ ՍԻՄՈՆՅԱՆԻՆ ԵՎ ԱՐԿԱԴԻ ՍԵՎԱԿԻ ԳԱԼՈՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 1419-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Սևակ Սերյոժայի Գալոյանը /անձնագիր՝ AS0510762, տրված 20.02.2019թվականին, 021-ի կողմից, հաշվառված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրի փողոց 24, տուն 63/1 հասցեում/, 2022 թվականի նոյեմբերի 30-ին դիմում ներկայացրել է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարին՝ խնդրելով իրեն և իր ընտանիքի անդամներին՝ կնոջը՝ Հայկուհի Սերյոժայի Սիմոնյանին և Արկադի Սևակի Գալոյանին/Յանձ/ սահմանված կարգով, որպես զոհված/մահացած/ պայմանագրային զինծառայողի ընտանիքի բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր ճանաչելու և ընդգրկելու Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված ցուցակում:

Դիմումին կից ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի 5060 զորամասի 2021 թվականի հունիսի 3-ի թիվ 511/648 տեղեկանքի պատճենը, Սերյոժա Սևակի Գալոյանի մահվան վկայականի պատճենը, Սևակ Սերյոժայի Գալոյանի , Հայկուհի Սերյոժայի Գալոյանի և Արկադի Սևակի Գալոյանի անձնագրերի և սոցալական քարտերի պատճենները, Սևակ Սերյոժայի Գալոյանի և Հայկուհի Սերյոժայի Գալոյանի ամուսնության վկայականի պատճեն, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի

կողմից տրված 2021թվականի դեկտեմբերի 10-ին տրված ընտանիքի կազմի մասին տեղեկանքը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի /այսուհետ՝ օրենք/ 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին 24-րդ կետի դրույթներով՝ 2021 թվականի մարտի 30-ին հարուցվել է վարչական վարույթ:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. **Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա/ Քաղաքացի Սևակ Սերյոժայի Գալոյանի որդին ՝ Սերյոժա Սևակի Գալոյանը զոհվել է 2020 թվականի հոկտեմբերի 20-ին մարտական գործողությունների ընթացքում՝ /հիմք Հայաստանի Հանրապետության Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի 5060 զորամասի 2021 թվականի հունիսի 3-ի թիվ 511/648 տեղեկանք/.

բ/Քաղաքացիներ Սևակ Սերյոժայի Գալոյանի, նրա կնոջ՝ Հայկուհի Սերյոժայի Սիմոնյանի և որդու՝ Արկադի Սևակի Գալոյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ /հիմք՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի SS կենտրոն ստորաբաժանման 2021թ թվականի դեկտեմբերի 12-ի թիվ թիվ ԱՏ-06122021-99-0244, ԱՏ-06122021-99-0257, ԱՏ-06122021-99-0245 տեղեկանքներ/.

գ/ Քաղաքացիներ Սևակ Սերյոժայի Գալոյանը, Հայկուհի Սերյոժայի Սիմոնյանը և Արկադի Սևակի Գալոյանը հաշվառված են Շիրակի մարզի Ամասիա համայնքի Ամասիա բնակավայրի փողոց 24, տուն 63/1 հասցեում, որը հանդիսանում է Յուրա Հարությունյանի սեփականությունը:

դ/ Քաղաքացիներ Սևակ Սերյոժայի Գալոյանը, Հայկուհի Սերյոժայի Սիմոնյանը և Արկադի Սևակի Գալոյանը փաստացի բնակվում են ուրիշի բնակարանում և նրանց ընտանիքը համայնքապետարանի կողմից բնակարանի փոխհատուցում չի ստացել:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության Պաշտպանության Նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված /մահացած/ զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» թիվ 1491-Ն որոշման դրույթներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Զոհված զինծառայող Սերյոժա Սևակի Գալոյանի ընտանիքին՝ ընդգրկել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1491-Ն որոշմամբ հաստատված ցուցակում.
   1) Սևակ Սերյոժայի Գալոյանին (հայրը), ծնված՝ 1966թվականին,
   2) Հայկուհի Սերյոժայի Սիմոնյանին (կինը), ծնված՝ 1967 թվականին,
   3) Արկադի Սևակի Գալոյանին (որդին), ծնված՝ 1991 թվականին:
2. Քաղաքացիներ Սևակ Սերյոժայի Գալոյանին, Հայկուհի Սերյոժայի Սիմոնյանին և Արկադի Սևակի Գալոյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Սևակ Սերյոժայի Գալոյանին, Հայկուհի Սերյոժայի Սիմոնյանին և Արկադի Սևակի Գալոյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկել օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«05» ապրիլի 2022 թվական
գյուղ Ամասիա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՄԱՍԻԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 78-Ա

«05» ապրիլի 2022 թվականի գյուղ Ամասիա

ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՑՈՂ ՄԱՐՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ, ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԳԵՎՈՐԳԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 1419-Ն ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱՍ

Քաղաքացի Հարություն Գևորգի Մկրտչյանը /նույնականացման քարտ՝ 011474392, տրված 15.07.2021 թվականին, 021-ի կողմից, հաշվառված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի Մեղրաշատ բնակավայրի փողոց 5, տուն 3 հասցեում/, 2022 թվականի հունվարի 24-ին ներկայացրել է դիմում Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարին՝ խնդրելով իրեն սահմանված կարգով, որպես 1-ին խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողի բնակարանային պայմանների բարելավման կարիքավոր ճանաչելու և ընդգրկելու Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ 2018թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1419-Ն որոշմամբ հաստատված ցուցակում:

Դիմումին կից ներկայացվել է Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության կենտրոնական ռազմաբժշկական հանձնաժողովի 2021թվականի ապրիլի 09-ի թիվ 247 եզրակացության, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության 58831 զորամասի 2021 թվականի մարտի 22-ի թիվ 523 տեղեկանքի, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության զորակոչային և

զորահավաքային 2021 թվականի մայիսի 01-ի ԲՍՓ թիվ 4 բաժնի կողմից տրված բժշկասոցիալական փորձաքննական թիվ 1513728, Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարարության զինծառայողների առողջապահական, սոցիալական պաշտպանության և վետերանների հարցերով գլխավոր վարչության 2021 թվականի հունիսի 30-ի թիվ 36/4617 տեղեկանքի, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի 2022թվականի հունվարի 25-ի թիվ ԱՏ 25012022-99-0106 տեղեկանքի, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ամասիա համայնքի ղեկավարի 2022 թվականի հունվարի 25-ի թիվ 41 տեղեկանքների պատճենները, Հարություն Գևորգի Մկրտչյանի , Անգին Ալբերտի Մկրտչյանի, Հովիկ Գևորգի Մկրտչյանի անձնագրերի և սոցիալական քարտերի պատճենները, հոր՝ Գևորգ Հարությունի Մկրտչյանի մահվան վկայականի պատճենը:

Ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի /այսուհետ՝ օրենք/ 1-ին հոդվածի, 2-րդ հոդվածի 2-րդ մասի, 3-րդ հոդվածի 1-ին կետի, 13-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ, 19-րդ հոդվածների, 30-րդ հոդվածի 1-ին մասի «ա» կետի և 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին 24-րդ կետի դրույթներով՝ 2022 թվականի մարտի 30-ին հարուցվել է վարչական վարույթ:

II ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍ

1. **Գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքներ և իրավական հիմնավորումներ.**

ա/ Հարություն Գևորգի Մկրտչյանը վիրավորվել է 2020 թվականի հոկտեմբերի 18-ին մարտական գործողություններին մասնակցելիս/հիմք Հայաստանի Հանրապետության Պաշտպանության Նախարարության 58831 զորամասի 2021 թվականի մարտի 22-ի թիվ 523 տեղեկանք/.

բ/ Հարություն Գևորգի Մկրտչյանի, նրա մոր՝ Անգին Ալբերտի Մկրտչյանի և եղբոր՝ Հովիկ Գևորգի Մկրտչյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ

/հիմք՝ Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի SS կենտրոն ստորաբաժանման 2022թվականի հունվարի 25-ի թիվ ԱՏ 25012022-99-0106 տեղեկանք/.

գ/ Քաղաքացի Հարություն Գևորգի Մկրտչյանը հաշվառված է Շիրակի մարզի Ամասիայի համայնքի Մեղրաշատ բնակավայրի փողոց 5, տուն 3 հասցեում, որը հանդիսանում է Գրիգոր Հարությունի Մկրտչյանի սեփականությունը:

դ/ Քաղաքացի Հարություն Գևորգի Մկրտչյանը ընտանիքը փաստացի բնակվում է ուրիշի բնակարանում և նրա ընտանիքը համայնքապետարանի կողմից բնակարանի փոխհատուցում չի ստացել:

III ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի «Հայաստանի Հանրապետության Պաշտպանության Նախարարության համակարգի՝ առաջին կամ երկրորդ խմբի հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողների և զոհված /մահացած/ զինծառայողների ընտանիքների բնակարանային ապահովության կարգը և չափերը սահմանելու մասին» թիվ 1491-Ն որոշման դրույթներով

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Քաղաքացի Հարություն Գևորգի Մկրտչյանի ընտանիքին՝ որպես մարտական գործողությունների մասնակից, ընդգրկել Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի դեկտեմբերի 6-ի թիվ 1491-Ն որոշմամբ հաստատված ցուցակում.
    1) Հարություն Գևորգի Մկրտչյանին(ինքը), ծնված՝ 1995թվականին,
    2) Անգին Ալբերտի Մկրտչյանին(մայրը), ծնված՝ 1970 թվականին,
    3) Հովիկ Գևորգի Մկրտչյանին (եղբայրը), ծնված՝ 1996 թվականին:
2. Քաղաքացի Հարություն Գևորգի Մկրտչյանին իրազեկել սույն վարչական ակտի ընդունման մասին՝ տրամադրելով սույն որոշման օրինակը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացի Հարություն Գևորգի Մկրտչյանին պատշաճ կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից և կարող է բողոքարկել օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

Ջ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

«05» ապրիլի 2022 թվականի
գյուղ Ամասիա